Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1295-27.03.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 32-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ կետերով.

«14.1) դատավորի փոխարինումից հետո դատարանը կայացրել է վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ որոշում.

14.2) ներկայացվել է սույն օրենսգրքի 268-րդ հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված միջնորդություն.

14.3) ներկայացվել է սույն օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված հիմքով միջնորդություն.»:

Հոդված 3. Օրենսգրքի 268-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

«2.1. Եթե դատավորի փոխարինումից հետո դատարանը որոշում է կայացրել դատական վարույթը շարունակելու մասին, ապա նախքան դատական կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները համարվում են հետազոտված՝ բացառությամբ այն ապացույցների, որոնք կրկին հետազոտելը դատարանը համարում է անհրաժեշտ: Ապացույց հետազոտելու վերաբերյալ կողմի միջնորդությունը դատարանի համար պարտադիր է:

2.2. Կողմի միջնորդությամբ և կողմերի համաձայնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 4-10-րդ կետերով նախատեսված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու մասին՝ առանց

տվյալ ապացույցը սույն օրենսգրքի 326-329-րդ և 331-332-րդ հոդվածներով նախատեսված կարգով հետազոտելու, եթե դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

2.3. Դատարանի կողմից սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված որոշումը չի կարող կայացվել, եթե մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է կամ դիրքորոշումը հայտնել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

2) 3-րդ մասը «հետազոտված» բառից հետո լրացնել «(ինչպես նաև դատական նիստում հետազոտված համարված)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 269-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «Բացառությամբ սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի, դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով, իսկ «նորից» բառը փոխարինել «սկզբից» բառով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ մասով.

«2.1. Եթե վարույթն ստանձնած դատավորը, ծանոթանալով գործի նյութերին, այդ թվում՝ դատական նախորդ կազմով հետազոտված ապացույցներին, գտնում է, որ գործի դատական վարույթը սկզբից սկսելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա ինքնաբացակի, բացարկի և վարույթին մասնակցելուց ազատելու հարցը լուծելուց հետո լսելով կողմերին՝ կարող է որոշում կայացնել վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 270.1-րդ հոդվածով.

«Հոդված 270.1. Դատաքննության ժամկետը

1. Առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննության արդյունքով եզրափակիչ դատական ակտը կայացվում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

2. Դատարանը, հաշվի առնելով գործի իրավական բարդությունը, վարութային անհրաժեշտ գործողություններ կատարելու ծավալը և այն հանգամանքները, որոնք անխուսափելիորեն երկարացնում են գործի քննության տևողությունը, կարող է պատճառաբանված որոշմամբ ոչ ավելի, քան երկու անգամ երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով:

3. Դատավորի փոխարինման դեպքում սույն հոդվածով նախատեսված ժամկետները շարունակվում են:

4. Դատավորի փոխարինման դեպքում, եթե քրեական վարույթը ստանձնելու օրվա դրությամբ գործի դատաքննության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով երկու անգամ երկարաձգվել է, ապա վարույթն ստանձնած դատարանը եզրափակիչ դատական ակտը կայացնում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 272-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը «նախնական» բառից հետո լրացնել «կամ հիմնական» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով.

«4.1. Ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով դատական նիստը դատարանի որոշմամբ անցկացվում է ազատության մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ, եթե վերջինս նախնական կամ հիմնական դատալսումների ընթացքում նման միջնորդություն է ներկայացրել: Դատարանը կարող է առանձին դատական նիստին կամ առանձին վարութային գործողությանը մեղադրյալի մասնակցությունը պարտադիր համարել:»:

Հոդված 7. Օրենսգրքի 311-րդ հոդվածը՝ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ մասերով.

«3. Դատավորի փոխարինման արդյունքում վարույթն ստանձնած դատարանը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հարցը քննարկելուց հետո կարող է քննարկման առարկա դարձնել վարույթն ընդհատված պահից շարունակելու հարցը:

4. Վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում դատարանը կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կրկին հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը, իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված այլ հարցերը չեն քննարկվում, և վարույթը շարունակվում է ընդհատված պահից:»:

Հոդված 8. Օրենսգրքի 325-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2-րդ մասով.

«1.2. Կողմն իրավունք ունի մինչև ապացույցի հետազոտումը սկսելը դատարանին միջնորդել ապացույցը հետազոտված համարելու մասին:»:

2) 2-րդ մասում «՝ հարցաքննության ընթացքում» բառերը փոխարինել «, այդ թվում՝ հարցաքննության ընթացքում՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը» բառերով:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով.

«5. Պաշտպանության կողմն իրավունք ունի ապացույցների հետազոտման ընթացքում դատարանին ներկայացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալում չներառված՝ մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելը հերքող առարկա կամ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածով նախատեսված փաստաթուղթ՝ միջնորդելով հետազոտել այն և ճանաչել որպես իրեղեն ապացույց կամ արտավարութային փաստաթուղթ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ապացույցը հետազոտելուց հետո պաշտպանության կողմը ներկայացնում է դրանով պայմանավորված քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ՝ միջնորդելով քննարկել հետազոտման ենթակա վերաբերելի այլ ապացույցների հետագա հետազոտումը սահմանափակելու հարցը:

7. Պաշտպանության կողմի փաստարկները լսելուց հետո դատարանը հետազոտման ենթակա վերաբերելի այլ ապացույցների հետագա հետազոտումը սահմանափակելու հարցի վերաբերյալ անց է կացնում խորհրդակցություն հանրային մեղադրողի, պաշտպանի, իսկ առկայության դեպքում՝ նաև տուժողի լիազոր ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

8. Խորհրդակցության արդյունքում կողմերը սույնօրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով կարող են միջնորդել սահմանափակել իրենց ներկայացրած ապացույցների հետագա հետազոտումը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 330-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1) կողմերը համաձայն են, որ վկայի կամ փորձագետի ցուցմունքը հրապարակվի առանց վերջիններիս դատարան կանչելու, և եթե դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա.»:

2) 3-րդ մասը «հաստատելուց» բառից հետո լրացնել «կամ մյուս կողմի համաձայնությունը ստանալուց հետո» բառերով:

Հոդված 10. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 336.1-րդ հոդվածով.

«Հոդված 336.1. Հիմնական դատալսումների ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու կարգը

1. Հիմնական դատալսումների ընթացքում սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-14-րդ կետերով նախատեսված որևէ հանգամանք ի հայտ գալուց հետո, դատարանը որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին: Եթե քրեական հետապնդումը բացառող հանգամանքը վերաբերում է մեղադրյալներից մեկին, ապա քրեական հետապնդումը դադարեցվում է միայն նրա նկատմամբ՝ առանց վարույթը կարճելու:

2. Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ապացույցը վերաբերում է քննության առարկա մեղադրանքի մի մասին, և այդ ապացույցով պայմանավորված ի հայտ է եկել սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հանգամանք, ապա դատարանը որոշում է կայացնում այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

3. Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացման վրա տարածվում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դրույթները:»:

Հոդված 11. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, որը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարույթ ստանձնված գործերի քննության վրա:

3. Նախքան սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձված գործերը ենթակա են լուծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և կարող են դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել ոչ ավելի, քան երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Կ-1295-27.03.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 32-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ կետերով.

«14.1) դատավորի փոխարինումից հետո դատարանը կայացրել է վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ որոշում.

14.2) ներկայացվել է սույն օրենսգրքի 268-րդ հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված միջնորդություն.

14.3) ներկայացվել է սույն օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված հիմքով միջնորդություն.»:

Հոդված 3. Օրենսգրքի 268-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

«2.1. Եթե դատավորի փոխարինումից հետո դատարանը որոշում է կայացրել դատական վարույթը շարունակելու մասին, ապա նախքան դատական կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները համարվում են հետազոտված՝ բացառությամբ այն ապացույցների, որոնք կրկին հետազոտելը դատարանը համարում է անհրաժեշտ: Ապացույց հետազոտելու վերաբերյալ կողմի միջնորդությունը դատարանի համար պարտադիր է:

2.2. Կողմի միջնորդությամբ և կողմերի համաձայնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 4-10-րդ կետերով նախատեսված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու մասին՝ առանց տվյալ ապացույցը սույն օրենսգրքի 326-329-րդ և 331-332-րդ հոդվածներով նախատեսված կարգով հետազոտելու, եթե դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

2.3. Դատարանի կողմից սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված որոշումը չի կարող կայացվել, եթե մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է կամ դիրքորոշումը հայտնել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

2) 3-րդ մասը «հետազոտված» բառից հետո լրացնել «(ինչպես նաև դատական նիստում հետազոտված համարված)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 269-րդ հոդվածում՝

1) ~~1.~~2-րդ ~~մասի~~ մասում «Բացառությամբ սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի, դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով, իսկ «նորից» բառը փոխարինել «սկզբից» բառով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ մասով.

«2.1. Եթե վարույթն ստանձնած դատավորը, ծանոթանալով գործի նյութերին, այդ թվում՝ դատական նախորդ կազմով հետազոտված ապացույցներին, գտնում է, որ գործի դատական վարույթը սկզբից սկսելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա ինքնաբացակի, բացարկի և վարույթին մասնակցելուց ազատելու հարցը լուծելուց հետո լսելով կողմերին՝ կարող է որոշում կայացնել վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 270.1-րդ հոդվածով.

«Հոդված 270.1. Դատաքննության ժամկետը

1. Առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննության արդյունքով եզրափակիչ դատական ակտը կայացվում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

2. Դատարանը, հաշվի առնելով գործի իրավական բարդությունը, վարութային անհրաժեշտ գործողություններ կատարելու ծավալը և այն հանգամանքները, որոնք

անխուսափելիորեն երկարացնում են գործի քննության տևողությունը, կարող է պատճառաբանված որոշմամբ ոչ ավելի, քան երկու անգամ երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով:

3. Դատավորի փոխարինման դեպքում սույն հոդվածով նախատեսված ժամկետները շարունակվում են:

4. ~~Եթե~~ ~~Դ~~ատավորի փոխարինման դեպքում, եթե քրեական վարույթը ստանձնելու օրվա դրությամբ գործի դատաքննության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով երկու անգամ երկարաձգվել է~~՝ դատաքննության առավելագույն ժամկետի ավարտին մնացել է մեկ տարուց պակաս ժամանակ~~, ապա ~~դատավորի փոխարինման արդյունքում~~ վարույթն ստանձնած դատարանը եզրափակիչ դատական ակտը կայացնում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 272-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը «նախնական» բառից հետո լրացնել «կամ հիմնական» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով.

«4.1. Ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով դատական նիստը դատարանի որոշմամբ անցկացվում է ազատության մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ, եթե վերջինս նախնական կամ հիմնական դատալսումների ընթացքում նման միջնորդություն է ներկայացրել: Դատարանը կարող է առանձին դատական նիստին կամ առանձին վարութային գործողությանը մեղադրյալի մասնակցությունը պարտադիր համարել:»:

Հոդված 7. Օրենսգրքի 311-րդ հոդվածը՝ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ մասերով.

«3. Դատավորի փոխարինման արդյունքում վարույթն ստանձնած դատարանը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հարցը քննարկելուց հետո կարող է քննարկման առարկա դարձնել վարույթն ընդհատված պահից շարունակելու հարցը:

4. Վարույթն ընդհատված պահից շարունակելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում դատարանը կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կրկին հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը, իսկ սույն հոդվածի 1-ին մասով

նախատեսված այլ հարցերը չեն քննարկվում, և վարույթը շարունակվում է ընդհատված պահից:»:

Հոդված 8. Օրենսգրքի 325-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2-րդ մասով.

«1.2. Կողմն իրավունք ունի մինչև ապացույցի հետազոտումը սկսելը դատարանին միջնորդել ապացույցը հետազոտված համարելու մասին:»:

2) 2-րդ մասում «՝ հարցաքննության ընթացքում» բառերը փոխարինել «, այդ թվում՝ հարցաքննության ընթացքում՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը» բառերով:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով.

«5. Պաշտպանության կողմն իրավունք ունի ապացույցների հետազոտման ընթացքում դատարանին ներկայացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալում չներառված՝ մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելը հերքող առարկա կամ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածով նախատեսված փաստաթուղթ՝ միջնորդելով հետազոտել այն և ճանաչել որպես իրեղեն ապացույց կամ արտավարութային փաստաթուղթ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ապացույցը հետազոտելուց հետո պաշտպանության կողմը ներկայացնում է դրանով պայմանավորված քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ՝ միջնորդելով քննարկել հետազոտման ենթակա վերաբերելի այլ ապացույցների հետագա հետազոտումը սահմանափակելու հարցը:

7. Պաշտպանության կողմի փաստարկները լսելուց հետո դատարանը հետազոտման ենթակա վերաբերելի այլ ապացույցների հետագա հետազոտումը սահմանափակելու հարցի վերաբերյալ անց է կացնում խորհրդակցություն հանրային մեղադրողի, պաշտպանի, իսկ առկայության դեպքում՝ նաև տուժողի լիազոր ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

8. Խորհրդակցության արդյունքում կողմերը սույն~~՝՝ քրեական դատավարության~~ օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով կարող են միջնորդել սահմանափակել իրենց ներկայացրած ապացույցների հետագա հետազոտումը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 330-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1) կողմերը համաձայն են, որ վկայի կամ փորձագետի ցուցմունքը հրապարակվի առանց վերջիններիս դատարան կանչելու, և եթե դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա.»:

2) 3-րդ մասը «հաստատելուց» բառից հետո լրացնել «կամ մյուս կողմի համաձայնությունը ստանալուց հետո» բառերով:

Հոդված 10. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 336.1-րդ հոդվածով.

«Հոդված 336.1. Հիմնական դատալսումների ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու կարգը

1. Հիմնական դատալսումների ընթացքում սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-14-րդ կետերով նախատեսված որևէ հանգամանք ի հայտ գալուց հետո, դատարանը որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին: Եթե քրեական հետապնդումը բացառող հանգամանքը վերաբերում է մեղադրյալներից մեկին, ապա քրեական հետապնդումը դադարեցվում է միայն նրա նկատմամբ՝ առանց վարույթը կարճելու:

2. Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ապացույցը վերաբերում է քննության առարկա մեղադրանքի մի մասին, և այդ ապացույցով պայմանավորված ի հայտ է եկել սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հանգամանք, ապա դատարանը որոշում է կայացնում այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

3. Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացման վրա տարածվում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դրույթները:»:

Հոդված 11. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով լրացվող՝ 270.1-ին հոդվածից, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հուլիսի 1-ից~~:

2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, որը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարույթ ստանձնված գործերի քննության

~~վրաՍույն օրենքի 5-րդ հոդվածը տարածվում է 2027 թվականի հուլիսի 1-ից մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական գործերի վրա~~:

3. Նախքան սույն օրենք~~ի 5-րդ հոդվածով լրացվող՝ 270.1-ին հոդվածի ո~~ն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձված գործերը ենթակա են լուծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և կարող են դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել ~~մեկ~~ ոչ ավելի, քան երկու անգամ՝ ~~-~~յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով~~ոչ ավելի, քան մեկ տարով~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» **ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1295-27.03.2026-ՊԻ-011/1)**
ԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1295[1]-27.03.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1.	**Կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծում առկա տեխնիկական վրիպակը վերացնելու նպատակով՝ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվող հղումը առաջարկում ենք շտկել, քանի որ Օրենսգրքի 269-րդ հոդվածում բացակայում է 1.2-րդ մաս:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 5-րդ և 11-րդ հոդվածներ**	Առաջարկում ենք վերանայել դատավարական ժամկետները նախատեսելիս Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքում նոր լրացվող 270.1-ին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածի և Նախագծի 11-րդ հոդվածների մոտեցումները և ապահովել ժամկետների հաշվարկման միասնական չափանիշների հիման վրա կարգավորումներ՝ հաշվի առնելով, որ Նախագծում առկա է ժամկետների հաշվարկման չափանիշի շեղում: Մասնավորապես, Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև 2027 թվականի հուլիսի 1-ին ընդունված գործերի քննության համար նախատեսվել է առավելագույնը 2 տարի ժամկետ, մինչդեռ 2027 թվականի հուլիսի 1-ին հետո վարույթ ընդունված գործերը հնարավոր է լինելու քննել առավելագույնը 3 տարի ժամկետում: Ուստի, առաջարկում ենք, Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 270.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 270.1. Դատաքննության ժամկետը 1. Առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննության արդյունքով եզրափակիչ դատական ակտը կայացվում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:		

			2. Դատարանը, հաշվի առնելով գործի իրավական բարդությունը, վարութային անհրաժեշտ գործողություններ կատարելու ծավալը և այն հանգամանքները, որոնք անխուսափելիորեն երկարացնում են գործի քննության տևողությունը, կարող է պատճառաբանված որոշմամբ ոչ ավելի, քան երկու անգամ երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով: 3. Դատավորի փոխարինման դեպքում սույն հոդվածով նախատեսված ժամկետները շարունակվում են: 4. Դատավորի փոխարինման դեպքում, եթե քրեական վարույթը ստանձնելու օրվա դրությամբ գործի դատաքննության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով երկու անգամ երկարաձգվել է, ապա վարույթն ստանձնած դատարանը եզրափակիչ դատական ակտը կայացնում է վարույթն ստանձնելու օրվանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում:», իսկ Նախագծի 11-րդ հոդվածը (Եզրափակիչ մաս և		

			անցումային դրույթ) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, որը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարույթ ստանձնված գործերի քննության վրա: 3. Նախքան սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձված գործերը ենթակա են լուծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և կարող են դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել ոչ ավելի, քան երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:		
3.	**Կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 325-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանության կողմն իրավունք ունի ապացույցների հետազոտման ընթացքում դատարանին ներկայացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալում չներառված՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելը հերքող առարկա կամ փաստաթուղթ՝ միջնորդելով հետազոտել այն և ճանաչել որպես իրեղեն ապացույց կամ արտավարութային փաստաթուղթ:»: Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արտավարութային փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս:»: Վերոգրյալի լույսի ներքո ցանկանում ենք արձանագրել, որ Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 325-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասում կիրառվող «փաստաթուղթ» հասկացությունը ավելի նեղ է և ամբողջ ծավալով չի արտահայտում այն բոլոր օբյեկտները, որոնք կարող են ճանաչվել արտավարույթային փաստաթուղթ: Առաջարկում ենք լրամշակել Նախագծի 8-րդ		

			հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 325-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասը և այն համապատասխանեցնել Օրենսգրքի 96-րդ հոդվածի կարգավորումներին:		
4.	**Կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետ	Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 325-րդ հոդվածում նոր լրացվող 8-րդ մասում «ՀՀ քրեական դատավարության» բառերը փոխարինել «սույն» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ					
1.	**Կառավարություն**		«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ «Սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «սահմանադրական օրենք» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենսգրքի վերնագիրը:»:		
2.	**Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով և համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը և Նախագծի վերնագիրը**	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանվում է, որ «Ընդհանուր ժողովի կողմից սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամների պաշտոնը թափուր մնալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, հանձնաժողովի անդամ չընտրելու դեպքում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը տասնօրյա ժամկետում:»: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն «Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը յոթնօրյա ժամկետում դիմում է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրելու և հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպելու համար: Արտահերթ Ընդհանուր ժողով պետք է հրավիրվի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հանձնաժողովի նախագահի դիմումն ստանալու պահից քառասունհինգօրյա ժամկետում: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում ընտրություն կազմակերպելիս հաշվի են առնվում նաև 77-րդ հոդվածի 4-րդ և 5.1-ին մասերով սահմանվող պահանջները:»: Հիմք ընդունելով այն, որ օրենսգրքի 77.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն արտահերթ Ընդհանուր ժողով պետք է հրավիրվի Հանձնաժողովի նախագահի դիմումը ստանալու պահից քառասունհինգօրյա ժամկետում, իսկ օրենսգրքի 77-րդ հոդվածի 18-րդ մասի տրամաբանությունն այն պետք է լինի, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամների ընտրությունը կատարվում է, եթե նրանք Ընդհանուր ժողովի կողմից չեն ընտրվել, առաջարկում ենք կարգավորումը առավել հստակեցնելու նպատակով սահմանել, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամների		

			ընտրությունը իրականացվում է միայն օրենսգրքի 77.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում հանձնաժողովի դատավոր անդամներ չընտրելու դեպքում: Վերոշարադրյալի հիման վրա առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 18-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «18. Սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամների պաշտոնը թափուր մնալու օրվանից հետո Ընդհանուր ժողովի կողմից սույն օրենսգրքի 77.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում հանձնաժողովի անդամ չընտրելու դեպքում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը տասնօրյա ժամկետում:»: Վերոգրյալների հիման վրա՝ անհրաժեշտ է **համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը և Նախագծի վերնագիրը՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.** **««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում**		

			փոփոխություն և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ:		